


ԲՄԿ ՊՈԻՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան



Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և դատավարության
Հեղինակ՝ Ի.Գ.Դ., պրոֆեսոր Ծաղիկյան Ս.Շ.

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Քրեական իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

Պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան՝ «Քրեական իրավունք. հատուկ մաս» առարկան «Իրավագիտություն» մասնագիտությամբ ուսանողների պատրաստման քրեական իրավունքի մասնագիտացման առարկաներից է: Քրեական իրավունքի հատուկ մասը ներառում է հանցագործությունների առանձնահատուկ տեսակների բնութագրերի նկարագրությունը, դասակարգումը ըստ տեսակների, ինչպես նաև ուսումնասիրում է հանցագործության կատարման դեպքում կիրառվելիք քրեական հարկադրանքի հատուկ միջոցների հետ կապված հարցեր: Քանի որ հանցագործությունների որակման գործընթացն ինքնին մտավոր գործընթաց է, որի շրջանակներում համեմատվում են իրականում տեղի ունեցող արարքի հատկանիշները օրենքով սահմանված հանցագործության հատկանիշների հետ: Դասընթացի շրջանակներում ուշադրությունը կենտրոնացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության տարբերակիչ հատկանիշների վրա՝ Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ քրեական իրավունքի հատուկ մասի ընդհանուր բնութագրի ուսումնասիրությունը, ինչպես նաև կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների և ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների, ինչպես նաև սեփականության, տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, համակարգչային տեղեկատվության անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության, բնակչության առողջության, շրջակա միջավայրի անվտանգության, պետական իշխանության, զինվորական ծառայության կարգի, խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական բնութագրերի վերաբերյալ:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել քրեական իրավունքի հատուկ մասի հասկացությունը, համակարգը և նշանակությունը,
- ուսումնասիրել կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր բնութագիրը,
- ներկայացնել կյանքի և առողջության, ազատության, պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների հիմնական

ԲՄԿ ՊՈՒՅ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան

հանցակազմերը, ծանրացուցիչ հանգամանքները, որակման առանձնահատկությունները,

- ուսումնասիրել սեփականության, տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, համակարգչային տեղեկատվության անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության, բնակչության առողջության, շրջակա միջավայրի անվտանգության, պետական իշխանության, զինվորական ծառայության կարգի, խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր բնութագիրը,

- ներկայացնել սեփականության, տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, համակարգչային տեղեկատվության անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության, բնակչության առողջության, շրջակա միջավայրի անվտանգության, պետական իշխանության, զինվորական ծառայության կարգի, խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների հիմնական հանցակազմերը,

- ուսումնասիրել սեփականության, տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, համակարգչային տեղեկատվության անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության, բնակչության առողջության, շրջակա միջավայրի անվտանգության, պետական իշխանության, զինվորական ծառայության կարգի, խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների ծանրացուցիչ հանգամանքները,

- ներկայացնել սեփականության, տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, համակարգչային տեղեկատվության անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության, բնակչության առողջության, շրջակա միջավայրի անվտանգության, պետական իշխանության, զինվորական ծառայության կարգի, խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների որակման առանձնահատկությունները,

- ուսումնասիրել սեփականության, տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, համակարգչային տեղեկատվության անվտանգության, հասարակական կարգի և բարոյականության, բնակչության առողջության, շրջակա միջավայրի անվտանգության, պետական իշխանության, զինվորական ծառայության կարգի, խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների և հարակից հանցագործությունների սահմանազատման չափանիշները:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի առարկան ձևավորում է սոցիալական հարաբերությունների մի ամբողջություն, որը ծագում է անձի կողմից հանցագործություն կատարելու փաստով:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Իմանալ հանցագործությունների որակման հիմնական կանոնները:
2. Իմանալ քրեաիրավական նորմերի մրցակցության լուծման հիմնական կանոնները:
3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նախատեսված հանցակազմերի օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները:
4. Իմանալ քրեական իրավունքի Հատուկ մասի ոլորտում հայեցակարգային գիտական ապարատը, որն անհրաժեշտ է կատարվածին արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար:
5. Իմանալ քրեական օրենսդրության Հատուկ մասի կիրառման տեսական և գործնական խնդիրները:

Հմտությունները՝

1. Տիրապետում է կատարվածին գրագետ քրեաիրավական գնահատական տալու հմտություններին;
2. Տիրապետում է քրեաիրավական նորմերի մրցակցության գրագետ լուծման հմտություններին;
3. Տիրապետում է հանցագործություններ որակելիս ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները մասնագիտական գործունեության մեջ կիրառելու

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

1. Կարող է տարանջատել հանցագործությունը այլ իրավախախտումներից:
2. Կարող բացահայտել քրեական օրենսդրության Հատուկ մասի նորմերի կիրառման գործնական խնդիրները:
3. Կարող է վերլուծել քրեաիրավական հարաբերությունները:
4. Կարող է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները:
5. Կարողանում է իրավաբանորեն հիմնավորված որոշումներ կայացնել գործող քրեական օրենսդրությանը համապատասխան:

Դասավանդման եղանակները և մեթոդները

ԲՄԿ ՊՈՒՅ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան

Դասընթացը մատուցվում է դասախոսությունների և գործնական աշխատանքների եղանակով: Դասընթացի մատուցման ընթացքում օգտագործվում են ինչպես դասական, այնպես էլ դասավանդման ինտերակտիվ մեթոդները:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է 5 ակադեմիական կրեդիտ (180 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 68 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 3 ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարություն, այդ թվում՝	180
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	136
1.1.1. Դասախոսություններ	68
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	68
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	44
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	քննություն / ստուգարք գն.

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսություններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4
Թեմա 1. Քրեական իրավունքի հատուկ մասի հասկացությունը	4	2	2

ԲՄԿ ՊՈՒՅ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան

Թեմա 2. Խաղաղության եվ մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ	4	2	2
Թեմա 3. մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործություններ	4	2	2
Թեմա 4. առողջության դեմ ուղղված հանցագործություններ	4	2	2
Թեմա 5. կյանքը եվ առողջությունը վտանգող հանցագործություններ	4	2	2
Թեմա 6. ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ	4	2	2
Թեմա 7. սեռական ազատության եվ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ	4	2	2
Թեմա 8. սահմանադրական իրավունքների եվ ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ	4	2	2
Թեմա 9. ընտանիքի եվ երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ	4	2	2
Թեմա 10. սեփականության, տնտեսության եվ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ: հափշտակությունները	4	2	2
Թեմա 11. սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունները	4	2	2
Թեմա 12. տնտեսական հանցագործությունները	4	2	2
Թեմա 13. հասարակական կարգի եվ բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները	4	2	2
Թեմա 14. հասարակական անվտանգության դեմ ուղղված	4	2	2

ԲՄԿ ՊՈՒՅ ՌՈԼՍ-Հայկական (Սլավոնական) համալսարան

ընդհանուր հանցագործությունները	բնույթի			
Թեմա 15. զենքի, հրազենի կամ այլ հանրավտանգ նյութերի եվ առարկաների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունները		4	2	2
Թեմա 16. երթևեկության անվտանգության եվ տրանսպորտի շահագործման սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունները		4	2	2
Թեմա 17. աշխատանքների եվ գործունեության իրականացման անվտանգության հատուկ կանոններով կամ պահանջներով սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունները		4	2	2
Թեմա 18. համակարգչային համակարգի եվ համակարգչային տվյալների անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները		4	2	2
Թեմա 19. շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները		4	2	2
Թեմա 20. թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունները		4	2	2
Թեմա 21. բնակչության առողջության դեմ ուղղված այլ հանցագործություններ		4	2	2
Թեմա 22. սահմանադրական կարգի հիմունքների եվ պետության		6	3	3

ԲՄԿ ՊՈՒՅ ՌՈԼԱ-Հայկական (Սլավոնական) համալսարան

անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները			
Թեմա 23. հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները	4	2	2
Թեմա 24. կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները	6	3	3
Թեմա 25. արդարադատության շահերի դեմ ուղղված հանցագործությունները	6	3	3
Թեմա 26. զինվորական ենթակայության կարգի եվ զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունները	6	3	3
Թեմա 27. զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ ուղղված հանցագործությունները	6	3	3
Թեմա 28. զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների օգտագործման, պահպանման, շահագործման կամ դրանց հետ վարվելու կարգի դեմ ուղղված հանցագործությունները	6	3	3
Թեմա 29. հատուկ ծառայությունների կրման եվ հատուկ պայմաններում զինվորական պարտքի կատարման կարգի դեմ ուղղված հանցագործությունները	6	3	3
Թեմա 30. զինվորական պաշտոնեական հանցագործությունները	6	3	3
Ընդամենը	136	68	68

Դասընթացի թեմաների բովանդակությունը

ԹԵՄԱ 1. Քրեական իրավունքի հատուկ մասի հասկացությունը

Քրեական իրավունքի հատուկ մասի հասկացությունը և նշանակությունը: Քրեական իրավունքի հատուկ մասի համակարգը: Հանցագործությունների որակումը և դրա նշանակությունը:

ԹԵՄԱ 2. Խաղաղության եվ մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ

Ցեղասպանությունը: Ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը: Մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները: Ցեղասպանությունը կամ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները հրապարակայնորեն հերքելը, արդարացնելը, դրանք քարոզելը կամ դրանց վտանգավորությունը նսեմացնելը: Հովանավորվող անձի դեմ ուղղված պատերազմական հանցագործությունները Սեփականության կամ այլ իրավունքների դեմ ուղղված պատերազմական հանցագործությունները: Մարդասիրական օգնության ցուցաբերման կամ տարբերանշանների դեմ ուղղված պատերազմական հանցագործությունները:

Պատերազմ վարելու արգելված եղանակների կիրառմամբ պատերազմական հանցագործությունները: Պատերազմ վարելու արգելված միջոցների կիրառմամբ պատերազմական հանցագործությունները: Դիակապտությունը: Մարտադաշտում սպանվածների դիակներն անարգելը: Չինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքները ոչնչացնելը, վնասելը, հափշտակելը կամ առգրավելը կամ դրանց նպատակային նշանակությունը փոփոխելը Պատերազմի կամ զինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության կանոնները խախտելը Ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական թշնամանք հարուցելու նպատակով մշակութային արժեքները ոչնչացնելը կամ վնասելը: Անգործությունը զինված ընդհարման ժամանակ: Վարձկանությունը:

Ագրեսիան: Համավարակի կամ մարդկության անվտանգությանն անմիջական սպառնալիքի իրավիճակի պայմաններում ագրեսիվ ռազմական գործողություններ նախաձեռնելը, իրականացնելը կամ դրանք չդադարեցնելը: Ագրեսիա իրականացնելու ուղղակի և հրապարակային կոչերը: Միջազգային ահաբեկչությունը: Չանգվածային ոչնչացման զենք ստեղծելը, տրամադրելը, փորձարկելը կամ կիրառելը: Էկոցիդը:

ԹԵՄԱ 3. Մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործություններ

Կյանքի դեմ ուղղված հանցագործություններ: Հասարակ սպանություն: Ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն: Մեղմացուցիչ հանգամանքներում սպանություն: Անզգուշությամբ մահ պատճառելը: Ինքնասպանության հասցնելը և ինքնասպանության հակելը:

ԹԵՄԱ 4. Առողջության դեմ ուղղված հանցագործություններ

Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը: Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը: Մեղմացուցիչ հանգամանքներում առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը: Առողջությանը թեթև վնաս պատճառելը: Ծեծ: Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը: Անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը: Անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը:

ԹԵՄԱ 5. Կյանքը եվ առողջությունը վտանգող հանցագործություններ

Հղիության ապօրինի արհեստական ընդհատում (աբորտ) կատարելը: Հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելը կամ ամլացումը: Հղիության արհեստական ընդհատմանը (աբորտ կատարելուն) կամ ամլացմանը հարկադրելը:

Մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակելը: Մարդու իմունային անբավարարության վիրուսով անզգուշությամբ վարակելը: Սեռավարակով վարակելը: Սեռավարակով անզգուշությամբ վարակելը: Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ վարակելը:

Վտանգի մեջ թողնելը: Մարդու սաղմի, պտղի, մարդու կամ դիակի բջիջների, հյուսվածքների, օրգանների կամ կենսաբանական նյութերի կամ հեղուկների ապօրինի շրջանառությունը: Փոխպատվաստման կանոնները խախտելը: Անձին առանց իր համաձայնության բժշկական, գիտական կամ այլ փորձի ենթարկելը: Մարդու վերարտադրողական կլոնավորումը կամ եվգենիկական փորձերը: Բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

ԹԵՄԱ 6. Ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ

Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը: Երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը: Շահագործման վիճակում գտնվող մարդու ծառայությունից օգտվելը: Մարդուն առևանգելը: Ազատությունից ապօրինի զրկելը: Հոգեբուժական կազմակերպությունում ապօրինի տեղավորելը կամ պահելը: Հոգեկան ներգործությունը: Ֆիզիկական ներգործությունը: Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը: Ամուսնությանը, ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն հարկադրելը:

ԹԵՄԱ 7. Սեռական ազատության եվ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ

Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները: Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը: Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի նկատմամբ: Անառակաբարո արարք կատարելը: 16 տարին չլրացած անձին սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծել կամ արտադրել առաջարկելը (գրումինգ):

ԹԵՄԱ 8. Սահմանադրական իրավունքների եվ ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ

Խտրականությունը: Անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը: Բժշկական գաղտնիքը հրապարակելը: Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիությունը խախտելը: Բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը: Անձին տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելը: Խղճի կամ դավանանքի ազատության իրավունքի իրականացումը խոչընդոտելը: Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը: Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը:

Ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը: Ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին կամ կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը: Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը: 215. Քվեարկության գաղտնիությունը խախտելը: 216. Կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշներ, կտրոններ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ, դրոշմանիշներ, կտրոններ հանձնելը կամ դրանք իրացնելը: 217. Ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման համար անհրաժեշտ առարկաները հափշտակելը: 218. Ընտրակաշառք ստանալը: 219. Ընտրակաշառք տալը: 220. Ընտրակաշառքի միջնորդությունը: 221. Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը: 222. Ընտրական կամ հանրաքվեի փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը: 223. Ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: 224. Չենքով տեղամասային կենտրոն մուտք գործելը: 225. Գործադուլի մասնակցելուն կամ գործադուլի մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը: 226. Հղի կնոջը կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձին

աշխատանքի ընդունելուց հրաժարվելը կամ աշխատանքից անհիմն ազատելը: 227.
Հեղինակային և հարակից իրավունքները խախտելը: 228.
Արտոնագրային իրավունքը խախտելը: 229. Միավորում
(հասարակական կամ արհեստակցական միություն) կամ կուսակցություն ստեղծելու
իրավունքի իրականացումը կամ դրանց գործունեությունը խոչընդոտելը: 230.
Կուսակցությանը անդամագրվելուն կամ անդամությունը դադարեցնելուն
հարկադրելը կամ խոչընդոտելը: 231.Կուսակցության օգտին խոշոր չափերով
ապօրինի նվիրատվություն ներգրավելը: 232.Կուսակցությանը նվիրատվություն
կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով
չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափերով
շրջանցելը : 233.Կուսակցության օգտին նվիրատվություն կատարելուն հարկադրելը:
234.Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելը:
235. Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով
սահմանված առավելագույն չափը գերազանցելը: 236.Հավաք անցկացնելուն կամ
դրան մասնակցելուն խոչընդոտելը կամ հարկադրելը: 237.Լրագրողի
մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելը:

***ԹԵՄԱ 9. Ընտանիքի եվ երեխայի շահերի դեմ ուղղված
հանցագործություններ***

Անչափահասին հանցանքի կատարմանը հակելը կամ դրան մասնակից դարձնելը:
239.Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ
պատրաստելու կամ տարածելու հետ կապված գործողություններ կատարելուն
հակելը կամ ներգրավելը: 240.Երեխային հակահասարակական գործողություններ
կատարելուն ներգրավելը: 241.Ճնողներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է
երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը, երեխային ապօրինի
բաժանելը կամ երեխային փոխելը: 242.Երեխայի առքը կամ վաճառքը:
243.Ճնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության
իրականացումը խոչընդոտելը: 244.Որդեգրման գաղտնիքը հրապարակելը:
245.Որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը:
246.Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ
տեղեկություններ հաղորդելը:
247.Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելը
կամ ոչ պատշաճ կատարելը: 248.Երեխայի կյանքի անվտանգության ապահովման
կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ
կատարելը: 249.Խնամատար ծնողի, խնամակալի կամ հոգաբարձուի իրավունքները
չարաշահելը: 250.Ճնողական իրավունքներից հրաժարվելուն հակելը կամ
հարկադրելը: 251.Ալիմենտ (ապրուստավճար) վճարելուց խուսափելը:

ԹԵՄԱ 10. Սեփականության, տնտեսության եվ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ: հափշտակությունները

252. Ավագակությունը: 253. Կողոպուտը: 254. Գողությունը: 255. Խարդախությունը
256. Վստահված գույքը հափշտակելը: 257. Համակարգչային հափշտակությունը

ԹԵՄԱ 11. Սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունները

258. Շորթումը: 259. Գույքային վնաս պատճառելը խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով: 260. Գույքային վնաս պատճառելը սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով: 261. Գրավառուին վնաս պատճառելը: 262. Բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարերին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարելը կամ դրանց չափման համար նախատեսված սարքերի ցուցմունքներն ապօրինի փոխելը կամ դրանց բնականոն աշխատանքը խաթարելը: 263. Ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործելը: 264. Գույքը ոչնչացնելը կամ վնասելը: 265. Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: 266. Անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալը:

ԹԵՄԱ 12. Տնտեսական հանցագործությունները

267. Իրացնելու նպատակով կեղծ արժույթ, արտարժույթ, արժեթղթեր, վճարահաշվարկային այլ փաստաթղթեր կամ վճարային գործիքներ պատրաստելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, ձեռք բերելը կամ դրանք իրացնելը: 268. Ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը: 269. Արժեթղթերի շուկայում գնային չարաշահումը: 270. Կանխամտածված կեղծ գովազդ: 271. Կենսապահովման նվազագույն զամբյուղի մեջ մտնող ապրանքները ապրանքային շուկայից հանելը: 272. Մասնավոր ոլորտում կաշառք ստանալը: 273. Մասնավոր ոլորտում կաշառք տալը: 274. Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալը:

275. Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին կամ դրա կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալը: 276. Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու

համար ապօրինի վարձատրություն ստանալը կամ պահանջելը: 277. Մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը:

278. Առևտրային, ապահովագրական, հարկային, մաքսային, կենսաթոշակային, ծառայողական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կամ վարկային պատմությունը կամ վարկային բյուրոյում առկա վարկային տեղեկատվությունն ապօրինի օգտագործելը: 279. Առևտրային, ապահովագրական, հարկային, մաքսային, կենսաթոշակային, ծառայողական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կամ վարկային պատմությունը կամ վարկային բյուրոյում առկա վարկային տեղեկատվությունն ապօրինի հրապարակելը: 280. Առևտրային, ապահովագրական, հարկային, մաքսային, կենսաթոշակային, ծառայողական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին կամ վարկային պատմությանը կամ վարկային բյուրոյում առկա վարկային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը:

281. Ապօրինի ձեռնարկատիրական գործունեությունը: 282. Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը: 283. Չարաշահումները հրապարակային սակարկություններ կամ գնումներ անցկացնելիս: 284. Հակամրցակցային գործունեությունը: 285. Ապօրինի գործունեություն իրականացնելու կամ ապօրինի գործունեությունը քողարկելու նպատակով իրավաբանական անձ, դրա առանձնացված ստորաբաժանում, հիմնարկ ստեղծելը կամ օգտագործելը կամ նույն նպատակով անհատ ձեռնարկատեր հաշվառելը: 286. Առանց ապրանքների մատակարարման կամ առանց ծառայությունների մատուցման կեղծ փաստաթղթեր տրամադրելը, ծախսերի կամ եկամուտների վերաբերյալ կեղծ փաստաթղթեր կազմելը և ներկայացնելը:

287. Անօրինական գործունեությունը սնանկության ընթացքում: 288. Կանխամտածված սնանկությունը: 289. Իրացման նպատակով կեղծ ակցիզային դրոշմանիշներ կամ դրոշմապիտակներ պատրաստելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, ձեռք բերելը կամ օգտագործելը կամ դրանք իրացնելը: 290.

Հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելը: 291. Կանխիկ դրամական միջոցների և (կամ) վճարային գործիքների մաքսանենգությունը: 292. Մշակութային արժեքների և ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների մաքսանենգությունը: 293. Հայաստանի Հանրապետությունից արտահանված մշակութային արժեքները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չվերադարձնելը: 294. Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրում կեղծ տվյալներ ներառելը կամ ներկայացման ենթակա տվյալները թաքցնելը: 295.

Հանցավոր ճանապարհով ստացված գույք ձեռք բերելը, իրացնելը կամ իրացմանն աջակցելը: 296. Փողերի լվացումը:

ԹԵՄԱ 13. Հասարակական կարգի եվ բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները

297. Խուլիգանությունը: 298. Կավատությունը: 299. Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը: 300. Պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելը, տարածելը կամ պահպանելը: 301. Պատմության կամ մշակույթի հուշարձաններ կամ առանձնակի արժեք ունեցող առարկաներ կամ փաստաթղթեր ոչնչացնելը կամ վնասելը:

302. Պատմության կամ մշակույթի հուշարձաններ կամ առանձնակի արժեք ունեցող առարկաներ կամ փաստաթղթեր անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը: 303. Հնագիտական օբյեկտները ոչնչացնելը կամ վնասելը կամ այլ ապօրինի արարքներ կատարելը: 304. Հնագիտական օբյեկտները անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը կամ այլ ապօրինի արարքներ կատարելը: 305. Դիակն անարգանքի ենթարկելը: 306. Գերեզմանն անարգանքի ենթարկելը: 307. Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքը

ԹԵՄԱ 14. Հասարակական անվտանգության դեմ ուղղված ընդհանուր բնույթի հանցագործությունները

308. Ահաբեկչությունը: 309. Ահաբեկչական գործունեությանը նպաստելը: 310. Ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելը: 311. Ահաբեկչական կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը: 312. Ահաբեկչական կազմակերպությանը մասնակցելը: 313. Ահաբեկչությունն արդարացնելը, քարոզելը կամ ահաբեկչություն կատարելու կոչերը, ինչպես նաև այդպիսի կոչեր պարունակող նյութեր կամ առարկաներ տարածելը: 314. Ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ տարածելը: 315. Պատանդ վերցնելը կամ պահելը: 316. Օդանավեր, նավեր կամ երկաթուղային շարժակազմեր զավթելը, պահելը կամ փախցնելը: 317. Ծովահենությունը կամ օդահենությունը: 318. Հանցավոր կազմակերպություն ստեղծելը կամ ղեկավարելը: 319. Հանցավոր կազմակերպությանը մասնակցելը:

320. Օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելը կամ ղեկավարելը: 321. Օրենքով չնախատեսված զինված միավորմանը մասնակցելը: 322. Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը: 323. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը: 324. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը: 325. Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը: 326. Օրենքով սահմանված կարգի խախտմամբ հավաք կազմակերպելը կամ անցկացնելը:

327. Չանգվածային անկարգություններին մասնակցելը: 328. Չանգվածային անկարգություններ կատարելու հրապարակային կոչերը: 329. Ատելություն,

խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը: 330.Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը:

ԹԵՄԱ 15. Ձեռքի, հրազենի կամ այլ հանրավտանգ նյութերի եվ առարկաների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունները

331.Ռադիոակտիվ կամ միջուկային նյութերի կամ սարքերի ապօրինի շրջանառությունը, ինչպես նաև դրանք ոչնչացնելը կամ վնասելը: 332.Ռադիոակտիվ կամ միջուկային նյութեր կամ սարքեր կամ զանգվածային ոչնչացման զենք հափշտակելը: 333.Ռադիոակտիվ կամ միջուկային նյութեր կամ սարքեր կամ զանգվածային ոչնչացման զենք շորթելը: 334.Ապօրինի կերպով քաղաքացիական ողորկափող հրազեն, գազային, օդաճնշիչ, սառը կամ նետողական զենք կրելը: 335.Հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը:

336.Ապօրինի կերպով հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մասեր, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթեցման սարքեր պատրաստելը, ձևափոխելը կամ նորոգելը: 337.Հրազենի, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքերի պահպանության պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: 338.Հրազեն, դրա հիմնական բաղկացուցիչ մասեր, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթեցման սարքեր հափշտակելը: 339.

